Սոցիալական քաղաքականություն և զբաղվածություն

1. Աշխատանքի անվտանգություն, հիգիենա և առողջություն

Ներածություն

Աշխատանքի անվտանգության, հիգիենայի և առողջության բնագավառում ՀՀ օրենսդրության դրույթները ընդհանուր բնույթ են կրում և հիմնականում չեն համապատասխանում ԵՄ օրենսդրությանը: Բացառություն են կազմում որոշ հասկացությունների սահմանումները՝ գործատու, աշխատող, աշխատողի առողջություն և անվտանգություն, ռադիոակտիվ թափոններ, իոնացնող ճառագայթում և այլն[1]:

Աշխատանքի անվտանգության, հիգիենայի և առողջության բնագավառում ԵՄ օրենսդրությունը կարգավորում է աշխատավայրում առողջության և անվտանգության կազմակերպման նվազագույն պայմանները, գործատուի ու աշխատողի պարտականությունները, ինչպես նաև ապահովում է առողջության և անվտանգության կազմակերպման միջոցառումների կարգավորումը՝ ըստ աշխատավայրերի, վտանգավոր նյութերի, սարքավորումների տեսակների ու կիրառման և ըստ աշխատողների առանձին խոցելի խմբերի: Նշված խնդիրները Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով[2], «Բնակչության զբաղվածության մասին»[3], «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին»[4] ՀՀ օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով, որոնք, սակայն, ամբողջապես չեն ընդգրկում ԵՄ օրենսդրության պահանջները:

Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ պետք է նշել, որ ՀՀ օրենսդրությունում բացակայում է աշխատողների անվտանգության և առողջության պահանջների պահպանման վերաբերյալ հստակ և մանրամասն սահմանված մեխանիզմներ, որոնց կարգավորումը Հայաստանում իրականացվում է միայն կոլեկտիվ պայմանագրերով կամ գործատուի մշակած իրավական ակտերով:

Մասնավորապես, ՀՀ օրենսդրությունում նախատեսված չէ այնպիսի հիմնահարցերի կարգավորումը, ինչպիսիք են աշխատավայրում վտանգավոր քաղցկեղածին և մուտագեն նյութերի ու արտահայտչական էկրաններով սարքավորումների հետ առնչվող աշխատողների պաշտպանությունը, պայթյունավտանգ միջավայրում և հանքարդյունահանող արդյունաբերությունում աշխատողների, ծանր ֆիզիկական աշխատանք կատարող ու շարժական կամ ժամանակավոր աշխատավայրում աշխատողների անվտանգության ու առողջության ապահովման նվազագույն պահանջները, ինչպես նաև աշխատավայրում անվտանգության և առողջության վերաբերյալ ցուցանակների առկայության պահանջները, որոնք եվրոպական օրենքներում ստացել են մանրակրկիտ կարգավորում:

Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի անվտանգության, հիգիենայի և առողջության բնագավառը հիմնականում կարգավորվում է Աշխատանքային օրենսգրքի ընդհանուր բնույթ կրող իրավական նորմերով, որոնք չեն երաշխավորում առաջացող իրավահարաբերությունների մանրակրկիտ կարգավորումը: Անհրաժեշտ է ընդունել այս բնագավառի կարգավորման հստակ չափանիշներ ներառող նորմատիվ իրավական ակտեր, որոնք հնարավորություն կտան բնագավառի պատասխանատու պետական մարմիններին օբյեկտիվորեն և համալիր կերպով պաշտպանելու աշխատողների և գործատուների շահերը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մինչև 2009 թվականը «Աշխատանքի անվտանգություն, հիգիենա և առողջություն» ենթագլուխը ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2006 թվական

Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի անվտանգության, հիգիենայի և առողջության բնագավառի իրավահարաբերությունների կարգավորման բացը լրացնելու, ինչպես նաև աշխատողների անվտանգության և առողջության ապահովման միջոցառումների բարելավման նպատակով ՀՀ աշխատանքային օրենսգրքում կկատարվեն համապատասխան փոփոխություններ և

---

[1] 1989թ. հունիսի 12-ի դիրեկտիվ թիվ 89/391՝ «Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության ապահովման միջոցառումների բարելավումը խրախուսելու մասին», 2003թ. դեկտեմբերի 22-ի դիրեկտիվ թիվ 2003/122՝ «Բարձր ռադիոակտիվ և չվերահսկվող աղբյուրների ազդեցության կարգավորման մասին», 1996թ. մայիսի 13-ի դիրեկտիվ թիվ 96/29՝ «Իոնացնող ճառագայթների աղբյուրների վտանգներից՝ աշխատողների և հանրության պաշտպանության համար սահմանված հիմնական կանոնների և նորմերի մասին վերաբերյալ»:

[2] ՀՕ124, 09.11.2004թ.:

[3] ՀՕ-93, 03.12.1996թ.:

[4] ՀՕ-285, 01.02.1999թ.:

լրացումներ, ու կմշակվի «Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության ապահովման միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ հիմք ընդունելով ԵՄ թիվ 89/391 դիրեկտիվի[5] պահանջները, որն այս բնագավառի իրավական կարգավորման շրջանակները սահմանող հիմնական իրավական ակտն է: Վերոնշյալ դիրեկտիվի կիրառման համար նախատեսվում է ևս 10 դիրեկտիվների համապատասխանեցում, որոնց պահանջները ՀՀ օրենսդրությունում հիմնականում բացակայում են: Այդ ակտերը ապահովում են առողջության և անվտանգության կազմակերպման միջոցառումների կարգավորում՝ ըստ աշխատավայրերի, սարքավորումների տեսակների ու կիրառման և ըստ աշխատողների խոցելի խմբերի:

Մասնավորապես, շարժական կամ ժամանակավոր աշխատավայրերում աշխատողների, հղի և փոքր երեխա ունեցող կամ կրծքով կերակրող կանանց աշխատանքի, ծանր ֆիզիկական աշխատանք կատարող աշխատողների անվտանգության և առողջության նվազագույն պահանջները սահմանելու նպատակով կմշակվեն համապասխան իրավական ակտերի նախագծեր՝ համապատասխանաբար հիմք ընդունելով ԵՄ իրավական ակտերը՝ թիվ 92/57, 92/85, 90/269[6]:

2007 թվական

Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության վերաբերյալ ցուցանակների առկայության և նրանց կողմից օգտագործվող անհատական պաշտպանության միջոցների կիրառման, պայթյունավտանգ միջավայրում աշխատողների, աշխատավայրում արտահայտչական էկրանների և աշխատանքային սարքավորումների հետ առնչվող աշխատողների, վերգետնյա, ստորգետնյա, ինչպես նաև գայլիկոնային եղանակով արդյունահանող հանքարդյունաբերության աշխատողների անվտանգության և առողջության նվազագույն պահանջները սահմանելու նպատակով կմշակվեն համապասխան իրավական ակտերի նախագծեր՝ համապատասխանաբար հիմք ընդունելով ԵՄ իրավական ակտերը՝ թիվ 89/656, 89/655, 90/270, 92/58, 1999/92, 92/91 և 92/104 դիրեկտիվները[7]:

Աշխատանքի անվտանգության, հիգիենայի և առողջության բնագավառում ՀՀ օրենսդրության համապատասխանեցման գործընթացի նպատակն է աշխատավայրում վտանգավոր նյութերի, ինչպես նաև աղմուկի հետ առնչվող աշխատողների առողջության և անվտանգության պաշտպանությունն ու վտանգավոր նյութերի առկայության դեպքում հնարավոր դժբախտ պատահարների կանխարգելումը և վերահսկումը:

Այս նպատակով կմշակվեն չորս ենթաօրենսդրական ակտեր՝ «Աշխատավայրում վտանգավոր նյութերի առկայության դեպքում հնարավոր վթարների կանխարգելման վերահսկման մասին» ՀՀ կառավարության որոշման նածագիծ, «Աշխատավայրում աղմուկի առկայության դեպքում, աշխատողների անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջները սահմանելու մասին» համապատասխան իրավական ակտի նախագիծ, «Քիմիական նյութերի և ասբեստի ազդեցությունից աշխատողների պաշտպանության և անվտանգության ապահովման նվազագույն պահանջները սահմանելու մասին» համապատասխան իրավական ակտի նախագիծ հիմք ընդունելով համապատասխան ԵՄ դիրեկտիվների[8] պահանջները:

---

[5] 1989թ. հունիսի 12-ի դիրեկտիվ թիվ 89/391՝ «Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության ապահովման միջոցառումների բարելավումը խրախուսելու մասին»:

[6] 1992թ. հունիսի 24-ի դիրեկտիվ թիվ 92/57՝ «Շարժական կամ ժամանակավոր աշխատավայրերում աշխատողների անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջների մասին», 1992թ. հոկտեմբերի 19-ի դիրեկտիվ թիվ, 92/85՝ «Հղի և փոքր երեխա ունեցող կամ կրծքով կերակրող կանանց աշխատավայրում անվտանգության և առողջության ապահովման պահանջների բարելավումը խրախուսելու մասին», 1990թ. մայիսի 29-ի դիրեկտիվ թիվ 90/269՝ «Ծանր ֆիզիկական աշխատանք կատարող աշխատողների մեջքի վնասման ռիսկի առկայության դեպքում նախատեսված անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջների մասին»:

[7] 1989թ. նոյեմբերի 30-ի դիրեկտիվ թիվ 89/656՝ «Աշխատավայրում անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջների կիրառումը աշխատողների կողմից օգտագործվող անհատական պաշտպանության միջոցների վերաբերյալ», 1989թ. նոյեմբերի 30-ի դիրեկտիվ թիվ 89/655՝ «Աշխատանքային սարքավորումների հետ առնչվող աշխատողների անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջների մասին», 1990թ. մայիսի 29-ի դիրեկտիվ թիվ 90/270՝ «Աշխատավայրում արտահայտչական էկրաններով սարքավորումների հետ առնչվող աշխատողների անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջների մասին», 1992թ. հունիսի 24-ի դիրեկտիվ թիվ 92/58՝ «Աշխատավայրում անվտանգության և առողջության վերաբերյալ ցուցանակների առկայության նվազագույն պահանջների մասին», 1992թ. դեկտեմբերի 16-ի դիրեկտիվ թիվ 1999/92՝ «Պայթյունավտանգ միջավայրում աշխատողների անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջների մասին», 1992թ. նոյեմբերի 3-ի դիրեկտիվ թիվ 92/91՝ «Գայլիկոնային եղանակով հանքարդյունահանող արդյունաբերության աշխատողների անվտանգության և առողջության նվազագույն պահանջներ սահմանելու մասին», 1992թ. դեկտեմբերի 3-ի դիրեկտիվ թիվ 92/104՝ «Վերգետնյա և ստորգետնյա հանքարդյունահանող արդյունաբերության աշխատողների անվտանգության և առողջության նվազագույն պահանջներ սահմանելու մասին»:

[8] 1996թ. դեկտեմբերի 9-ի դիրեկտիվ թիվ 96/82՝ «Աշխատավայրում վտանգավոր նյութերի առկայության դեպքում հնարավոր վթարների կանխարգելման և վերահսկման մասին», 2003թ. փետրվարի 6-ի դիրեկտիվ թիվ 2003/10՝ «Աշխատավայրում աղմուկի առկայության դեպքում. աշխատողների անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջների մասին», 1998թ. ապրիլի 7-ի դիրեկտիվ թիվ 98/24՝ «Աշխատողների պաշտպանությունը և անվտանգության ապահովումը քիմիական

2008 թվական

Հայաստանի Հանրապետությունում երիտասարդների աշխատանքի պաշտպանության իրավական կարգավորման մեխանիզմների կատարելագործման համար կմշակվի «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ՝ հիմք ընդունելով ԵՄ թիվ 94/33 դիրեկտիվը[9]:

ԵՄ համապատասխան դիրեկտիվի հիման վրա կմշակվի «Աշխատավայրում վտանգավոր քաղցկեղածին և փոփոխածին նյութերի հետ առնչվող աշխատողների պաշտպանության նվազագույն պահանջները սահմանելու մասին» համապատասխան[10]:

Աշխատանքի անվտանգության, հիգիենայի և առողջության բնագավառում ՀՀ օրենսդրության համապատասխանեցման հիմնական նպատակը հստակ և մանրամասն իրավական կարգավորման մեխանիզմների սահմանման միջոցով իոնացնող ճառագայթների, բարձր ռադիոակտիվ և չվերահսկվող աղբյուրների վտանգներից աշխատողների և հանրության պաշտպանությունն է: Այս ուղղությամբ նախատեսվում է իոնացնող ճառագայթների աղբյուրների վտանգներից աշխատողների և հանրության պաշտպանության մասին օրենքի, քիմիական, կենսաբանական և ֆիզիկական նյութերից աշխատողների պաշտպանության և նշված նյութերի սահմանային քանակները սահմանելու մասին ու բարձր ռադիոակտիվ և չվերահսկվող աղբյուրների ազդեցության կարգավորման մասին ՀՀ կառավարության որոշման նախագծերի մշակում՝ հիմք ընդունելով ԵՄ թիվ 96/29, 90/641, և 91/32 դիրեկտիվները[11]:

2009 թվական

Բարձր ռադիոակտիվ և չվերահսկվող աղբյուրների ազդեցության կարգավորման մասին, 2009 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում կմշակվի համապատասխան իրավական ակտի նախագիծ՝ հիմք ընդունելով ԵՄ թիվ 2003/122 դիրեկտիվը[12]:

նյութերի ազդեցությունից» 1983թ. սեպտեմբերի 19-ի դիրեկտիվ թիվ 83/477՝ «Աշխատավայրում ազբեստին առնչվող աշխատողների պաշտպանության մասին»:

[9] 1994թ. հունիսի 22-ի դիրեկտիվ թիվ 94/33՝ «Երիտասարդ աշխատողների իրավունքների պաշտպանության մասին»:

[10] 2004թ. ապրիլի 29-ի դիրեկտիվ թիվ 2004/37՝ «Աշխատավայրում վտանգավոր քաղցկեղածին և փոփոխածին (մուտագեն) նյութերի հետ առնչվող աշխատողների պաշտպանության մասին»:

[11] 1996թ. մայիսի 13-ի դիրեկտիվ թիվ 96/29՝ «Իոնացնող ճառագայթների աղբյուրների վտանգներից՝ աշխատողների և հանրության պաշտպանության համար սահմանված հիմնական կանոնների և նորմերի մասին», 1990թ. դեկտեմբերի 4-ի դիրեկտիվ թիվ 90/641՝ «Իոնացնող ճառագայթման վերահսկման տարածքում աշխատողների պաշտպանության մասին» և և 1991թ. մայիսի 29-ի դիրեկտիվ թիվ 91/322՝ «Քիմիական, կենսաբանական և ֆիզիկական նյութերից աշխատողների պաշտպանության և նշված նյութերի սահմանային քանակները սահմանելու մասին»:

[12] 2003թ. դեկտեմբերի 22-ի դիրեկտիվ թիվ 2003/122՝ «Բարձր ռադիոակտիվ և չվերահսկվող աղբյուրների ազդեցության կարգավորման մասին»:

1.1. Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2006			
1.	• ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • «Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության ապահովման միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1989թ. հունիսի 12-ի «Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության ապահովման միջոցառումների բարելավումը խրախուսելու մասին» թիվ 89/391 դիրեկտիվ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (ՀՀ արդարադատության նախարարության մասնակցությամբ)	4-րդ եռամսյակ	41	Խորհրդատվություն, փորձաքննություն
2.	«Շարժական կամ ժամանակավոր աշխատավայրերում աշխատողների անվտանգության և առողջության նվազագույն պահանջները սահմանելու մասին» համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում	1992թ. հունիսի 24-ի «Շարժական կամ ժամանակավոր աշխատավայրերում աշխատողների անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջների մասին» թիվ 92/57 դիրեկտիվ	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	4-րդ եռամսյակ	82	Խորհրդատվություն
3.	«Հղի և փոքր երեխա ունեցող կամ կրծքով կերակրող կանանց աշխատանքի անվտանգության և առողջության ապահովման պահանջների բարելավման մասին» համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում	1992թ. հոկտեմբերի 19-ի «Հղի և փոքր երեխա ունեցող կամ կրծքով կերակրող կանանց աշխատավայրում անվտանգության և առողջության ապահովման պահանջների բարելավումը խրախուսելու մասին» թիվ 92/85 դիրեկտիվ	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	4-րդ եռամսյակ	35	Խորհրդատվություն, փորձաքննություն
4.	«Ծանր ֆիզիկական աշխատանք կատարող աշխատողների անվտանգության և առողջության նվազագույն պահանջները սահմանելու մասին» համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում	1990թ. մայիսի 29-ի «Ծանր ֆիզիկական աշխատանք կատարող աշխատողների մեջքի վնասման ռիսկի առկայության դեպքում նախատեսված անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջների մասին» թիվ 90/269դիրեկտիվ	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	4-րդ եռամսյակ	30	Խորհրդատվություն, փորձաքննություն

ԸՆԴԱՄԵՆԸ					188	
2007						
5.	«Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության վերաբերյալ ցուցանակների առկայության և նրանց կողմից օգտագործվող անհատական պաշտպանության միջոցների կիրառման անվտանգության և առողջության նվազագույն պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	• 1989թ. նոյեմբերի 30-ի «Աշխատավայրում անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջների կիրառումը աշխատողների կողմից օգտագործվող անհատական պաշտպանության միջոցների վերաբերյալ» թիվ 89/656 դիրեկտիվ • 1992թ. հունիսի 24-ի «Աշխատավայրում անվտանգության և առողջության վերաբերյալ ցուցանակների առկայության նվազագույն պահանջների մասին» թիվ 92/58 դիրեկտիվ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարության մասնակցությամբ)	1-ին եռամսյակ	170	Խորհրդատվություն, փորձաքննություն
6.	«Պայթյունավտանգ միջավայրում աշխատողների անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1992թ. դեկտեմբերի 16-ի «Պայթյունավտանգ միջավայրում աշխատողների անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջների մասին» թիվ 1999/92 դիրեկտիվ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մասնակցությամբ)	1-ին եռամսյակ	51	Խորհրդատվություն, փորձաքննություն
7.	«Աշխատավայրում արտահայտչական էկրանների և աշխատանքային սարքավորումների հետ առնչվող աշխատողների անվտանգության և առողջության նվազագույն պահանջները սահմանելու մասին» համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում	• 1989թ. նոյեմբերի 30-ի «Աշխատանքային սարքավորումների հետ առնչվող աշխատողների անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջների մասին» թիվ 89/655 դիրեկտիվ • 1990թ. մայիսի 29-ի «Աշխատավայրում արտահայտչական էկրաններով սարքավորումների հետ առնչվող աշխատողների անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջների մասին» թիվ 90/270	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	2-րդ եռամսյակ	60	Խորհրդատվություն, փորձաքննություն

		դիրեկտիվ				
8.	«Վերգետնյա, ստորգետնյա, ինչպես նաև գայլիկոնային եղանակով արդյունահանող հանքարդյունաբերության աշխատողների անվտանգության և առողջության նվազագույն պահանջները սահմանելու մասին» համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում	• 1992թ. նոյեմբերի 3-ի «Գայլիկոնային եղանակով հանքարդյունահանող արդյունաբերության աշխատողների անվտանգության և առողջության նվազագույն պահանջներ սահմանելու մասին» թիվ 92/91դիրեկտիվ • 1992թ. դեկտեմբերի 3-ի «Վերգետնյա և ստորգետնյա հանքարդյունահանող արդյունաբերության աշխատողների անվտանգության և առողջության նվազագույն պահանջներ սահմանելու մասին» թիվ 92/104 դիրեկտիվ	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	2-րդ եռամսյակ	110	Խորհրդատվություն, փորձաքննություն
9.	«Աշխատավայրում վտանգավոր նյութերի առկայության դեպքում հնարավոր վթարների կանխարգելման և վերահսկման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1996 թ. դեկտեմբերի 9-ի «Աշխատավայրում վտանգավոր նյութերի առկայության դեպքում հնարավոր վթարների կանխարգելման և վերահսկման մասին» թիվ 96/82 դիրեկտիվ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (Հայաստանի փրկարար ծառայության մասնակցությամբ)	3-րդ եռամսյակ	135	Խորհրդատվություն, փորձաքննություն
10.	«Աշխատավայրում աղմուկի առկայության դեպքում, աշխատողների անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջները սահմանելու մասին» համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում	2003թ. փետրվարի 6-ի «Աշխատավայրում աղմուկի առկայության դեպքում աշխատողների անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջների մասին» թիվ 2003/10դիրեկտիվ	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	3-րդ եռամսյակ	24	Խորհրդատվություն,
11.	«Քիմիական նյութերի և ասբեստի ազդեցությունից աշխատողների պաշտպանության և անվտանգության ապահովման նվազագույն պահանջները սահմանելու մասին» համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում	• 1998թ. ապրիլի 7-ի «Աշխատողների պաշտպանությունը և անվտանգության ապահովումը քիմիական նյութերի ազդեցությունից» թիվ 98/24 դիրեկտիվ • 1983թ. սեպտեմբերի 19-ի «Աշխատավայրում աբեստոսին առնչվող աշխատողների	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	4-րդ եռամսյակ	119	Խորհրդատվություն, փորձաքննություն

		պաշտպանության մասին» թիվ 83/477 դիրեկտիվ				
ԸՆԴԱՄԵՆԸ					669	
2008						
12.	«ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	1994թ. հունիսի 22-ի «Երիտասարդ աշխատողների իրավունքների պաշտպանության մասին» թիվ 94/33 դիրեկտիվ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	1-ին եռամսյակ	34	
13.	«Աշխատավայրում վտանգավոր քաղցկեղածին և փոփոխածին նյութերի հետ առնչվող աշխատողների պաշտպանության նվազագույն պահանջները սահմանելու մասին« համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում	2004թ. ապրիլի 29-ի «Աշխատավայրում վտանգավոր քաղցկեղածին և փոփոխածին (մուտագեն) նյութերի հետ առնչվող աշխատողների պաշտպանության մասին» թիվ 2004/37 դիրեկտիվ	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	1-ին եռամսյակ	95	Խորհրդատվություն, փորձաքննություն
14.	«Իոնացնող ճառագայթների աղբյուրների վտանգներից՝ աշխատողների և հանրության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	• 1996թ. մայիսի 13-ի «Իոնացնող ճառագայթների աղբյուրների վտանգներից՝ աշխատողների և հանրության պաշտպանության համար սահմանված հիմնական կանոնների և նորմերի մասին» թիվ 96/29 դիրեկտիվ • 1990թ դեկտեմբերի 4-ի «Իոնացնող ճառագայթման վերահսկման տարածքում աշխատողների պաշտպանության մասին» թիվ 90/641 դիրեկտիվ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ բնապահպանության նախարարության մասնակցությամբ)	3-րդ եռամսյակ	192	Խորհրդատվություն, փորձաքննություն
15.	«Քիմիական բիոլոգիական և ֆիզիկական նյութերից աշխատողների պաշտպանության և նշված նյութերի սահմանային քանակները սահմանելու մասին» համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում	1991թ մայիսի 29-ի «Քիմիական, բիոլոգիական և ֆիզիկական նյութերին առնչվող աշխատողների պաշտպանության և նշված նյութերի սահմանային արժեքները սահմանելու մասին» թիվ 91/322 դիրեկտիվ	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	4-րդ եռամսյակ	15	Փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					336	
2009						
16.	«Բարձր ռադիոակտիվ և չվերահսկվող աղբյուրների	2003թ. դեկտեմբերի 22-ի «Բարձր ռադիոակտիվ և չվերահսկվող	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի	1-ին եռամսյակ	60	

	ազդեցության կարգավորման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	աղբյուրների ազդեցության կարգավորման մասին» թիվ 2003/122 դիրեկտիվ	նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ բնապահպանության նախարարության մասնակցությամբ)			
		ԸՆԴԱՄԵՆԸ			*60*	
		ԸՆԴԱՄԵՆԸ			*1253*	

1.2 Ինստիտուցիոնալ կարողություններ

0	1	2	3	4
NN	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
p/կ				
1.	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմնում աշխատանքի անվտանգության և հիգիենայի կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում և(կամ) հզորացում	ԵՄ-ում աշխատողների անվտանգության և առողջության ապահովման միջոցառումների բարելավումը խրախուսելու վերաբերյալ դասընթաց (15 օր/2006)	Խորհրդատվություն, անձնակազմի համալրում, նյութատեխնիկական բազա
2.	• ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն • ՀՀ առողջապահության նախարարություն	--	ԵՄ-ում կանանց և երիտասարդների աշխատանքի անվտանգության և առողջության ապահովման միջոցառումների վերաբերյալ դասընթաց (10 օր/2006)	Խորհրդատվություն
	• ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն • ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն		ԵՄ-ում վտանգավոր քիմիական նյութերի, ասբեստի և աղմուկի հետ առնչվող աշխատողների աշխատանքի անվտանգության և առողջության ապահովման վերաբերյալ դասընթաց (15 օր/2007թ.)	Խորհրդատվություն
	• ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն • ՀՀ առողջապահության նախարարություն	-	ԵՄ-ում պայթունավտանգ միջավայրում և սարքավորումների հետ աշխատողների, ծանր ֆիզիկական աշխատանք կատարողների ու աշխատավայրում անհատական պաշտպանության միջոցների աշխատանքի անվտանգության և առողջության ապահովման միջոցառումների և էրգոնոմիկայի վերաբերյալ դասընթաց (20 օր/2007)	Խորհրդատվություն
5.	• ՀՀ աշխատանքի և		ԵՄ-ում հանքարդյունաբերության ոլորտի	Խորհրդատվություն

	սոցիալական հարցերի նախարարություն • ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն	--	աշխատողների անվտանգության և առողջության ապահովման միջոցառումների վերաբերյալ դասընթաց (10 օր/2007թ.)	
	• ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն • ՀՀ առողջապահության նախարարաություն		ԵՄ-ում վտանգավոր քաղցկեղածին և փոփոխածին նյութերի հետ առնչվող աշխատողների աշխատանքի անվտանգության և առողջության ապահովման վերաբերյալ դասընթաց (8 օր/2008)	Խորհրդատվություն
4.	• ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն • Հայաստանի փրկարար ծառայություն	--	ԵՄ-ում աշխատավայրում վտանգավոր նյութերի առկայության դեպքում հնարավոր վթարների կանխարգելման և վերահսկման միջոցառումների բարելավման վերաբերյալ դասընթաց (10 օր/2008թ.)	Խորհրդատվություն
6.	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմնի՝ աշխատանքի անվտանգության և հիգիենայի կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում և(կամ) հզորացում «Աշխատավայրում անվտանգության և առողջության ապահովման Եվրոպական գործակալություն ստեղծելու մասին» 1994թ. հուլիսի 18-ի թիվ 2062/94 դիրեկտիվի պահանջներին համապատասխան	Աշխատավայրում անվտանգության և առողջության ապահովման Եվրոպական գործակալության վերաբերյալ դասընթաց (10 օր/2008թ.)	Խորհրդատվություն, անձնակազմի համալրում, նյութատեխնիկական բազա
3.	• ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն • ՀՀ առողջապահության նախարարաություն • ՀՀ բնապահպանության նախարարություն	--	ԵՄ-ում ռադիոակտիվ աղբյուրների հետ առնչվող և իոնացնող ճառագայթման ազդեցությանը ենթարկվող աշխատողների աշխատանքի անվտանգության և առողջության ապահովման վերաբերյալ դասընթաց (15 օր/2009թ.)	Խորհրդատվություն

2 Զբաղվածության իրավունք և աշխատանքի կազմակերպում

Ներածություն

Զբաղվածության իրավունքի և աշխատանքի կազմակերպման բնագավառում ՀՀ օրենսդրությունը կրում է ընդհանուր բնույթ և հիմնականում չի համապատասխանում ԵՄ օրենսդրությանը:

Զբաղվածության իրավունքի և աշխատանքի կազմակերպման բնագավառում ԵՄ օրենսդրությունը կարգավորում է աշխատողների իրավունքների պաշտպանությունը գործատուի սնանկացման, կազմակերպության վերակազմակերպման գործընթացներում, ինչպես նաև աշխատանքային պայմանագրից բխող պայմաններին պարտադիր գրավոր տեղեկանալու՝ աշխատողի իրավունքի պաշտպանությունը և աշխատաժամանակի կազմակերպման առողջության և անվտանգության նվազագույն պահանջների սահմանումը: Նշված խնդիրները Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով[13], «Անվճարունակության (սնանկության) մասին»[14], «Տրանսպորտի մասին»[15] ՀՀ օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով, որոնք, այնուամենայնիվ, ամբողջովին չեն նախատեսում ԵՄ օրենսդրության պահանջները:

Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ պետք է նշել, որ ՀՀ օրենսդրությունը չի համապատասխանում ԵՄ օրենսդրությանը աշխատողին գործատուի կողմից աշխատանքի պայմաններին պարտադիր ծանոթացման պահանջի և կարգի մասով, աշխատանքի պայմանների փոփոխման դեպքում համապատասխան տեղեկությունների գրավոր տրամադրման և այդ տեղեկությունների տրամադրման առավելագույն ժամկետների մասով, աշխատաժամանակի կազմակերպման համար առողջության և անվտանգության նվազագույն պահանջների մասով և այլն:

Բացի այդ, կազմակերպության վերակազմակերպման գործընթացում աշխատողների իրավունքները կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքի՝ ընդհանուր բնույթ կրող իրավական նորմերով, որոնք, ի տարբերություն համապատասխան ԵՄ իրավական ակտերի, չեն երաշխավորում առաջացող իրավահարաբերությունների մանրակրկիտ կարգավորումը:

Հիմնվելով համեմատական վերլուծության արդյունքների վրա՝ պետք է ընդգծել, որ «Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենքը ապահովում է աշխատանքային պայմանագրից կամ հարաբերություններից բխող պահանջների բավարարումը, սակայն ի տարբերություն համապատասխան ԵՄ օրենքների՝ ՀՀ օրենսդրությունում բացակայում են գործատուի սնանկացման և երաշխավորողի ինստիտուտի հասկացությունները, ինչպես նաև դրանց հետ կապված օրենսդրական կարգավորման հստակ մեխանիզմները:

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ տրանսպորտի ոլորտում աշխատողների իրավունքների պաշտպանության և աշխատանքի ու աշխատաժամանակի կազմակերպման հետ կապված իրավահարաբերությունների կարգավորումը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մինչև 2009 թվականը «Զբաղվածության իրավունք և աշխատանքի կազմակերպում» ենթագլուխը ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2007 թվական

Հայաստանի Հանրապետությունում զբաղվածության իրավունքի և աշխատանքի կազմակերպման բնագավառի իրավահարաբերությունների կարգավորման և, մասնավորապես, աշխատաժամանակի կազմակերպման միջոցառումների բարելավման, կազմակերպության վերակազմակերպման դեպքում աշխատողների իրավունքների պաշտպանության նպատակով կմշակվի «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ՝ հիմք ընդունելով համապատասխանեցման ենթակա ԵՄ թիվ 2003/88 և 2001/23 դիրեկտիվների[16] պահանջները:

ԵՄ թիվ 91/533 դիրեկտիվով[17] նախատեսված դրույթները, որոնք առնչվում են աշխատողին գործատուի կողմից աշխատանքի պայմաններին պարտադիր ծանոթացման պահանջին և կարգին, աշխատանքի պայմանների փոփոխման դեպքում համապատասխան տեղեկությունների գրավոր

---

[13] ՀՕ-124, 09.11.2004թ.:
[14] ՀՕ-17, 17.12.2003թ.:
[15] ՀՕ-201, 02.03.1998թ.:
[16] 2003թ. նոյեմբերի 4-ի դիրեկտիվ թիվ 2003/88՝ «Աշխատաժամանակին առնչվող կազմակերպչական որոշ խնդիրների մասին» և 2001թ. մարտի 12-ի դիրեկտիվ թիվ 2001/23՝ «Կազմակերպության վերակազմակերպման դեպքում աշխատողների իրավունքների պաշտպանության մասին»:
[17] 1991թ. հոկտեմբերի 14-ի դիրեկտիվ թիվ 91/533՝ «Աշխատանքային պայմանագրին կամ աշխատանքային հարաբերություններին առնչվող պայմաններն աշխատողին ներկայացնելու գործատուի պարտականության մասին»:

տրամադրմանը և այդ տեղեկությունների տրամադրման առավելագույն ժամկետներին համապատասխանեցնելու նպատակով կմշակվեն ՀՀ աշխատանքային օրենսգրքում և «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծեր:

ԵՄ թիվ 450/2003 դիրեկտիվի[18] աշխատուժի արժեքի համաթվի հաշվարկման օրենսդրական կարգավորման մասին դրույթները առկա չեն ՀՀ օրենսդրությունում: Այդ օրենսդրական բացը լրացնելու նպատակով կմշակվի «Աշխատուժի արժեքի համաթվի մասին» օրենքի նախագիծ:

2008 թվական

Այս փուլում զբաղվածության իրավունքի և աշխատանքի կազմակերպման բնագավառում ՀՀ օրենսդրության համապատասխանեցման գործընթացի նպատակն է գործատուի սնանկացման դեպքում աշխատողների իրավունքների պաշտպանության մեխանիզմների և ճանապարհային տրանսպորտի ոլորտի աշխատողների աշխատաժամանակի կազմակերպման առողջության և անվտանգության նվազագույն պահանջների սահմանումը, որի համար կմշակվեն «Գործատուի անվճարունակության (սնանկացման) դեպքում աշխատողների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի և «Ճանապարհային տրանսպորտի ոլորտում աշխատողների աշխատաժամանակի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծեր՝ հիմք ընդունելով ԵՄ թիվ 80/987 և 2002/15 դիրեկտիվները[19]:

2009 թվական

Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտի համակարգում աշխատողների սոցիալական պաշտպանության իրավական կարգավորման մեխանիզմների կատարելագործման համար կմշակվի «Տրանսպորտային համակարգում աշխատողների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի նախագիծ՝ ԵՄ թիվ 3820/85 դիրեկտիվի[20] պահանջներին համապատասխան:

---

[18] 2003թ. փետրվարի 27-ի դիրեկտիվ թիվ 450/2003՝ «Աշխատուժի արժեքի համաթվի մասին»:

[19] 1980թ. հոկտեմբերի 20-ի դիրեկտիվ թիվ 80/987՝ «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պաշտպանության վերաբերյալ ԵՄ անդամ պետություններում գործող իրավական ակտերի մոտարկման մասին» և 2002թ. մարտի 11-ի դիրեկտիվ թիվ 2002/15՝ «Շարժական ճանապարհային տրանսպորտով զբաղվող անձանց աշխատաժամանակի կազմակերպման մասին»:

[20] 1985թ. դեկտեմբերի 20-ի դիրեկտիվ թիվ 3820/85՝ «Տրանսպորտային համակարգին առնչվող սոցիալական օրենսդրության համապատասխանեցման մասին»:

2.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Նեկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2007			
1.	«ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	2003թ. նոյեմբերիի 4-ի «Աշխատաժամանակին առնչվող կազմակերպչական որոշ խնդիրների մասին» թիվ 2003/88 դիրեկտիվ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	1-ին եռամսյակ	53	Խորհրդատվություն
2.	• «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում • «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	1991թ. հոկտեմբերի 14-ի «Աշխատանքային պայմանագրին կամ աշխատանքային հարաբերություններին առնչվող պայմաններն աշխատողին ներկայացնելու, գործատուի պարտականության մասին» թիվ 91/533 դիրեկտիվ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	1-ին եռամսյակ	15	
3.	ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	2001թ. մարտի 12-ի «Կազմակերպության վերակազմակերպման դեպքում աշխատողների իրավունքների պաշտպանության մասին» թիվ 2001/23 դիրեկտիվ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (ՀՀ արդարադատության նախարարություն)	2-րդ եռմասյակ	44	Խորհրդատվություն, փորձաքննություն
4.	«Աշխատուժի արժեքի համաթվի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	2003թ. փետրվարի 27-ի «Աշխատուժի արժեքի համաթվի մասին» թիվ 450/2003 դիրեկտիվ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն)	2-րդ եռամսյակ	29	Խորհրդատվություն,
			ԸՆԴԱՄԵՆԸ		*141*	
			2008			
5.	«Ճանապարհային տրանսպորտի ոլորտում աշխատողների աշխատաժամանակի կազմակերպման մասին» ՀՀ	2002թ. մարտի 11-ի «Շարժական ճանապարհային տրանսպորտով զբաղվող անձանց աշխատաժամանակի	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (ՀՀ տրանսպորտի և կապի	1-ին եռամսյակ	18	Խորհրդատվություն, փորձաքննություն

	կառավարության որոշման նախագծի մշակում	կազմակերպման մասին» թիվ 2002/15 դիրեկտիվ	նախարարություն)			
6.	«Գործատուի անվճարունակության (սնանկացման) դեպքում աշխատողների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	1980թ. հոկտեմբերի 20-ի «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պաշտպանության վերաբերյալ ԵՄ անդամ պետություններում գործող իրավական ակտերի մոտարկման մասին» թիվ 80/987 դիրեկտիվ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (ՀՀ արդարադատության նախարարություն)	2-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն, փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					*33*	
			2009			
7.	«Տրանսպորտային համակարգում աշխատողների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	1985թ. դեկտեմբերի 20-ի «Տրանսպորտային համակարգին առնչվող սոցիալական օրենսդրության համապատասխանեցման մասին» թիվ 3820/85 դիրեկտիվ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն)	1-ին եռամսյակ	38	Խորհրդատվություն, փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					*38*	
ԸՆԴԱՄԵՆԸ					*212*	

2.2 Ինստիտուցիոնալ կարողություններ

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի վերակազմակերեպման նապատակով՝ «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ ստեղծելու մասին» ՀՀ կառավարության 2002 թ. օգոստոսի 22-ի թիվ 1405-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին կառավարության որոշման նախագծի մշակում «Կյանքի և աշխատանքային պայմանների բարելավման Եվրոպական հիմնադրամ ստեղծելու մասին» 1975թ. մայիսի 26-ի թիվ 1365/75 (ԵՀ) Խորհրդի կանոնակարգի պահանջներին համապատասխան	ԵՄ-ում աշխատաժամանակին առնչվող որոշ խնդիրների և աշխատանքային հարաբերություններին առնչվող պայմաններին աշխատողին ներկայացնելու գործատուի պարտականության վերաբերյալ դասընթաց (15 օր/2007) Կյանքի և աշխատանքային պայմանների բարելավման Եվրոպական հիմնադրամի վերաբերյալ դասընթաց (15 օր/2007)	Խորհրդատվություն, անձնակազմի համալրում, նյութատեխնիկական բազա
2.	• ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն • ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն	--	ԵՄ-ում աշխատուժի արժեքի համաթվի վերաբերյալ դասընթաց (10 օր/2007)	Խորհրդատվություն
3.	• ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն • ՀՀ արդարադատության նախարարություն	Գործատուի անվճարունակության կամ սնանկացման դեպքում աշխատողների վարձատրության երաշխավորման հիմնադրամի ստեղծում «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պաշտպանության վերաբերյալ ԵՄ անդամ պետություններում գործող իրավական ակտերի մոտարկման մասին» 1980թ. հոկտեմբերի 20-ի թիվ 80/987 դիրեկտիվի պահանջներին համապատասխան	ԵՄ-ում գործատուի անվճարունակության (սնանկացման) և կազմակերպության վերակազմակերպման դեպքում աշխատողների վարձատրության իրավունքի պաշտպանության վերաբերյալ դասընթաց (2008)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն, անձնակազմի համալրում, նյութատեխնիկական բազա
4.	• ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն • ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	--	ԵՄ-ում տրանսպորտի ոլորտի աշխատողների սոցիալական պաշտպանության վերաբերյալ դասընթաց (10 օր/2009)	Խորհրդատվություն

1.3 Տղամարդկանց և կանանց միջև հավասարություն

Ներածություն

Տղամարդկանց և կանանց միջև հավասարության մասին ԵՄ օրենսդրության դրույթները հիմնականում նախատեսված չեն ՀՀ օրենսդրությամբ: ԵՄ-ում տղամարդկանց և կանանց միջև հավասարության սկզբունքի բնագավառն ընդգրկում է կանանց և տղամարդկանց համահավասարության սկզբունքի կիրառումը, ինչպես նաև գյուղատնտեսության ու այլ ոլորտներում ինքնազբաղված կանանց իրավունքների պաշտպանությունը: Նշված իրավահարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում հիմնականում կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով[21], որի դրույթները, այնուամենայնիվ, չեն նախատեսում ԵՄ օրենսդրության պահանջները:

Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ պետք է նշել, որ ՀՀ օրենսդրությունում առկա չեն աշխատանքի ընդունվելու, մասնագիտական ուսուցում ստանալու, պաշտոնեական առաջխաղացման ժամանակ տղամարդկանց և կանանց միջև հավասար աշխատանքային իրավունքների ապահովման օրենսդրական մեխանիզմները, ինքնազբաղվածության հասկացությունը և տնտեսավարման այդ ոլորտում տղամարդկանց և կանանց միջև հավասար վերաբերմունքի ապահովման վերաբերյալ դրույթները:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մինչև 2009 թվականը «Տղամարդկանց և կանանց միջև հավասարություն» ենթագլուխը ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2007 թվական

Աշխատանքային հարաբերություններում սեռական համահավասարության սկզբունքի կիրառման իրավական կարգավորման բացը լրացնելու համար կմշակվի «Աշխատանքային հարաբերություններում սեռական համահավասարության սկզբունքի կիրառումը ապահովելու մասին» օրենքի նախագիծը՝ «Կանանց և տղամարդկանց համահավասարության սկզբունքի կիրառումը աշխատանքի ընդունվելու, մասնագիտական վերապատրաստում ստանալու, պաշտոնում առաջ գնալու և աշխատանքային հավասար պայմանների իրավունքի նկատմամբ» 1976թ. փետրվարի 9-ի թիվ 76/207 դիրեկտիվի պահանջներին համապատասխան:

2008 թվական

Գյուղատնտեսության և այլ ոլորտներում ինքնազբաղված կանանց և տղամարդկանց հանդեպ հավասար վերաբերմունքի սկզբունքի ապահովման իրավական կարգավորման բացը լրացնելու նպատակով կմշակվի «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ՝ ԵՄ թիվ 86/613 դիրեկտիվի[22] պահանջներին համապատասխան:

2009 թվական

Պետության ծրագրերում գենդերային հավասարության ապահովման նպատակով կմշակվի գենդերային հավասարության ապահովման մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ ԵՄ թիվ 806/2004 կանոնակարգի[23] պահանջներին համապատասխան:

---

[21] ՀՕ-124, 09.11.2004թ.:

[22] 1986թ. դեկտեմբերի 11-ի դիրեկտիվ թիվ 86/613՝ «Գյուղատնտեսության և այլ ոլորտներում ինքնազբաղված կանանց և տղամարդկանց հանդեպ հավասար վերաբերմունքի սկզբունքի կիրառման և հղիության ու մայրության ընթացքում ինքնազբաղված կանանց պաշտպանության մասին»:

[23] 2004թ. ապրիլի 21-ի կանոնակարգ թիվ 806/2004՝ «Զարգացման համագործակցության շրջանակներում գենդերային հավասարության ապահովման մասին»:

1.3.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Նեկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2007			
1.	«Աշխատանքային հարաբերություններում սեռական համահավասարության սկզբունքի կիրառումն ապահովելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	1976թ. փետրվարի 9-ի «Կանանց և տղամարդկանց համահավասարության սկզբունքի կիրառումը աշխատանքի վարձվելու, մասնագիտական վերապատրաստում ստանալու, պաշտոնում առաջ գնալու և աշխատանքային հավասար պայմանների իրավունքի նկատմամբ» թիվ 76/207 դիրեկտիվ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	1-ին եռամսյակ	18	Խորհրդատվություն
ԸՆԴԱՄԵՆԸ					*18*	
			2008			
2	«ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	1986թ. դեկտեմբերի 11-ի «Գյուղատնտեսության և այլ ոլորտներում ինքնազբաղված կանանց և տղամարդկանց հանդեպ հավասար վերաբերմունքի սկբունքի կիրառման և հղիության ու մայրության ընթացքում ինքնազբաղված կանանց պաշտպանության մասին» թիվ 86/613 դիրեկտիվ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն
		ԸՆԴԱՄԵՆԸ			*15*	
			2009			
3.	«Գենդերային հավասարության ապահովման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2004թ. ապրիլի 21-ի «Զարգացման համագործակցության շրջանակներում գենդերային հավասարության ապահովման մասին» թիվ 806/2004 կանոնակարգ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	1-ին եռամսյակ	21	--
ԸՆԴԱՄԵՆԸ					*21*	
ԸՆԴԱՄԵՆԸ					*54*	

1.3.2 Ինստիտուցիոնալ կարողություններ

NN ը/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	--	ԵՄ-ում կանանց և տղամարդկանց համահավասարության սկզբունքի կիրառումը ապահովող միջոցառումների վերաբերյալ դասընթաց (10 օր/2007)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

1.4 Սոցիալական երկխոսություն

Ներածություն

Սոցիալական երկխոսության բնագավառում ՀՀ օրենսդրությունը հիմնականում չի համապատասխանում ԵՄ երկրորդային օրենսդրությանը, քանի որ ունի կարգավորման առավել ընդհանուր բնույթ: Այս բնագավառում ԵՄ օրենսդրությունը նախատեսում է աշխատողներին կամ նրանց ներկայացուցիչներին տեղեկատվություն և խորհրդատվություն տրամադրելու գործատուի պարտականությունը, ինչը լիովին չի կարգավորվում ՀՀ օրենսդրությամբ:

Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ պետք է նշել, որ ՀՀ օրենսդրությունում առկա չեն գործատուների և աշխատողների միջև աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ տեղեկությունների փոխանցման գործընթացում աշխատողների ներկայացուցիչների և հատուկ փորձագետների ընդգրկման պայմանները և մեխանիզմները:

ՀՀ օրենսդրությունում առկա չեն նաև գործատուների և աշխատողների կամ նրանց ներկայացուցիչների միջև աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման այն պայմանները, որոնք առնչվում են համագործակցության սկզբունքին, փոխադարձ իրավունքների և պարտականությունների ընդունմանը, ինչպես նաև վերոնշյալ գործընթացում ծագած փոխադարձ շահերին: Չնայած ՀՀ օրենսդրությունում նախատեսված է սոցիալական գործընկերություն հասկացությունը, բացակայում է տեղեկությունների տրամադրման կարգը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մինչև 2007 թվականը «Սոցիալական երկխոսություն» ենթագլուխն ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2007 թվական

Գործատուների կողմից աշխատողներին կամ նրանց ներկայացուցիչներին տեղեկատվություն և խորհրդատվություն տրամադրելու կարգի հաստատման նպատակով կմշակվի «Գործատուների կողմից աշխատողներին կամ նրանց ներկայացուցիչներին տեղեկատվություն և խորհրդատվություն տրամադրելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ ԵՄ թիվ 2002/14 դիրեկտիվի[24] պահանջներին համապատասխան:

[24] 2002թ. մարտի 11-ի դիրեկտիվ թիվ 2002/14՝ «ԵՄ-ում գործատուների տեղեկատվություն և խորհրդատվություն տրամադրելու վերաբերյալ ընդհանուր շրջանակներ ստեղծելու մասին»:

1.4.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN						
Ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Նեկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2007			
1.	«Գործատուների կողմից աշխատողներին կամ նրանց ներկայացուցիչներին տեղեկատվություն և խորհրդատվություն տրամադրելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2002թ. մարտի 11-ի «ԵՄ-ում գործատուների տեղեկատվություն և խորհրդատվություն տրամադրելու վերաբերյալ ընդհանուր շրջանակներ ստեղծելու մասին» թիվ 2002/14 դիրեկտիվ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն
ԸՆԴԱՄԵՆԸ					*15*	

1.4.2 Ինստիտուցիոնալ կարողություններ

0	1	2	3	4
NN	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
Ը/կ				
1.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	--	Գործատուների կողմից աշխատողներին կամ նրանց ներկայացուցիչներին տեղեկատվություն և խորհրդատվություն տրամադրելու վերաբերյալ դասընթաց (5 օր/2007թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն